Արձանագրություն N 2

«ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23-24/86» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի
(Անասնաբուժության մեջ կիրառվող կենդանիների հակասիբիրախտային 55 շտամի կենդանի, թուլացված պատվաստանյութ)

ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 01 դեկտեմբերի 2023թ. ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ. Կարապետյան

Անդամներ՝ Լ. Սարգսյան, Ա. Դանիելյան

քարտուղար՝ Ա. Ղարիբջանյան

1. <u>ԷԱՃ ընթացակարգի հայտերի բացման մասին</u>

1. Ընդունել ի գիտություն, որ՝

ա. «**Անասնաբուժության մեջ կիրառվող կենդանիների հակասիբիրախտային 55 շտամի կենդանի, թուլացված պատվաստանյութի**» ձեռքբերման հրավերը 16.11.2023թ. հրապարակվել է «gnumner.am» կայքի գնումների հայտարարությունների «ԷԱՃ ընթացակարգի հայտարարություն և հրավեր» բաժնում, ինչպես նաև eauction.armeps.am էլեկտրոնային կայքում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 27.11.2023թ.:

բ. Հակադարձ աճուրդը կայացել է 2023 թվականի նոյեմբերի 28-ին https://eauction.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով: **<u>ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23-24/86 ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվել են 28.11.2023թ. 11:30-ին:</u>**

գ. Euction.armeps.am համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«Ագաստ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան Տ.Պետրոսյան 31/1 հեռ. (091)545-195 էլ. agastllc@mail.ru

<u>2. Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին</u>

2.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտի տեխնիկական բնութագրում բացակայում էին հրավերով սահմանված ձեռքբերվող ապրանքատեսակի, ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի և արտադրողի անվան մասին տեղեկատվությունը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը: Ծանուցվել է վերոհիշյալ մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը:

<u>3.Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի վերաբերյալ՝</u>

3.1 Մասնակցի գնային առաջարկը հետևյալն է.

Չափա-բաժին	Ապրանքի անունը	Մասնակցի անունը	Գինը (Առանց ԱՀՀ)	Գինը (ներառյալ ԱՀՀ)	Նախա-հաշվային գինը
1	Անասնա-բուժության մեջ կիրառվող կենդանիների հակասիբիրա խտային 55 շտամի կենդանի, թուլացված պատվաս-տանյութ	«Ագաստ» ՍՊԸ	10,292,625	12,351,150	12,351,150

4. ԷԱՃ ընթացակարգի գնահատման արդյունքների վերաբերյալ

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 42-րդ կետը՝ մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատվել է բավարար:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/Ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչել՝ «Ագաստ» ՍՊԸ-ին:

4.2 Առաջնորդվելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետով՝ անգործության ժամկետ չի սահմանվի: Համաձայն «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի՝ ընտրված մասնակցի հետ կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Մ. Կարապետյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ա. Ղարիբջանյան

Անդամներ՝ _____ Լ. Սարգսյան

_____ Ա. Դանիելյան